ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29.05.2019թ.
Ժամը 15[00]

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),,
անդամներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ռատյան,
ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության ՄշԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Օհանյան,
ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության ՄշԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավագյան

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հակոբյան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Գ. Հակոբյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Հակոբյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6» ծածկագրով ընթացակարգին Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից հայտով ներկայացված որոկավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Մասնակցի կողմից ներկայացված որակավորման փատաթղթերում առարկայի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Մինչև սահմանված ժամկետի ավարտը 31.05.2019թ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ -ն շտկել է վերոնշված անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ -ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը 03.06.19թ. որոշեց Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:

1.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Հակոբյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող, Գ. Ուատյան

Գնահատող, Ա. Օհանյան

Գնահատող, Կ. Ավագյան

Գնումների համակարգող՝ Գ. Հակոբյան